

ՏՆՕՐԷՆ-ԵՄՐԱԳՐԱԳՐՈՒՄՆ

7. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան	500 դր.
Վեցամսեայ	250 »
Մսամսեայ	150 »
Սրտապահման արկ.	70 ճր.

Փամբարգազրութիւն կ'սկսի
ամեն ամսոյ 1 և 15 թիւ

100 ՓՈՐԱ



ՀԻՍՏԱԳՐԱՅԻՆ-Մ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

Fondateur
M. MAMOURIAN

Directeur-Rédacteur en chef
H. MAMOURIAN

„Arévelian Mamoul,“

JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

100 ՓՈՐԱ

Օրսօքերը ազգային եւ քաղաքական

ՓՈՒՍԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

Մարդկային աստուծոյ պատմութեան մէջ, ամենէ աւելի դժուարին և միեւնոյն ժամանակ անարկու շրջանները կազմած են փոխանցման շրջանները:

Հին ու ժամանակակից դարերու ընթացքին մէջ, կ'հանդիպինք նմանօրինակ փափուկ ժամանակամիջոցներու, ուր մարդկային ընկերութիւնը ապրած է ճգնաժամային օրեր ու տարիներ, ուր մարդիկ յաջողած չեն նոյնիսկ երկար տարիներ իրարու խօսք հասկնալ, իրարու գործակից ու աշակից գտնուիլ:

Միեւնոյն նպատակներուն, միեւնոյն սկզբունքներուն ձգտելով հանդերձ:

Երկարատեւ մաքառումներու, անընդհատ բնհարումներու, ժամանակի անվերջ սպառումներու հարկ տեսնուած է այդ միեւնոյն սկզբունքներուն ձգտող մարմինները իրարու մօտ բերելու, որպէսզի այդ երկար պայքարներու արդիւնքին վրայ հանդարտ ու վճիռ կերպով խորհին, անոնց նոյնութեան վերահասու դառնան և ապարդիւն կերպով չպարտասանն ու շտարտողն ընկերակա՛ն օյժ երը:

Պատմութիւնը կ'ընկնուի ըստ է նշանաւոր հեղինակ մը, և շատ իրաւամբ, որովհետեւ եթէ յետագործ ակնարկ մը ուզենք թողուլ 5րդ դարէն մինչև 12րդ դար, նայն ժամանակի մարդկային ազգին ու անոր մէջ գոյութիւն ունեցող գրասիրտներուն վրայ, եթէ պարզօրէն անոնց մէջ միայն ուրոյն պատմութիւնը, ունեցած հանգրուանները յառաջիմութեան ու քաղաքակրթութեան շուրջին վրայ, օրինակի համար եթէ փորձենք ուսումնասիրել հանրութեան կամ հասարակութեան (commune) դարաւոր պայքարները, զասակարգային անվերջանալի վէճերը, որոնք ըստ կարգի մղուած են աւատականութեան, աւատակալութեան, թագաւորի տիրոջ ունեցողներու, ապա հետզհետէ դարձած են մեծամեծներու, իշխաններու, արհեստագետներու դէմ. պիտի տեսնենք թէ յարատեւօրէն մղուած այդ դարաւոր պայքարը, ներքնապէս կը ձգտէր ազատագրումի մը, ընկերական որոշ առանձնաշնորհումներ ձեռք բերելու նպատակի մը իրականացում:

Միեւնոյն վիճակին մէջ կ'գտնուի դարձեալ մարդկային ընկերութիւնը համաշխարհային ներկայ պատերազմէն վերջ:

Աշխարհի նախ քան պատերազմ տիրող կարգերու մէջ անպիսի յեղաշրջում մը յառաջ եկած ըլլալով, գոյութեան պայքարն է որ կը մղուի լուսազոյն կերպով գոյութեան մը տիրանալու տենչանքով: Եւ որովհետեւ մարդկային միտքը, հակասակ իր զարգացման ու կատարելութեան հասած աստիճանին, երբ շահերու և նորանոր ատանձնաշնորհումներու հետապնդումով կը ստորաբերի, չյաջողիր իր յատկութիւնը և պաշարները պահել, որով կ'վստորի շատ անել վիճակի մը մէջ զիրար չըմբռնելու, իրարու նպատակ չկատարելու սխալէն առաջնորդուած, կ'պատրաստէ ակամայ գոյավիճակ մը, որ է ի զուր կը փնտռէ գուրս սարգելու ելք մը:

Ահա այս միեւնոյն վիճակին ակամայ կ'ըլլանք զինադադարի կնքումէն ի վեր: Կնքուած զաշնագիրները անգոր կզան աշխարհի խաղաղացման, իսկ ներքնապէս մեծ ու փոքր ազգութիւնները ունին իրենց ներքին ցաւերը, որոնց դարձան մը ճարտու համար, չեն յաջողիր ելից նար մը գտնել:

Փոխանցման շրջանի մը սկզբնական աստիճաններուն վրայ կ'գտնուինք և շատ դժուար պիտի ըլլար գուշակել թէ այս սկիզբը ե՞րբ պիտի յաջորի վերջ մը ունենալ:

Ընդհանուր աշխարհի և զանազան ազգերու այս փոխանցման շրջանէն եթէ դառնանք պահ մըն ալ ակնարկ մը թողուլ մեր ներքին վիճակին վրայ, պիտի հանդիպինք միեւնոյն երեւոյթներուն, միեւնոյն ցաւերուն, միեւնոյն անել կացութեան և մեր կրած փոխանցման շրջանը ալ աւելի ծանրակշիռ է, որովհետեւ պարզ փոխանցման շրջան մը չներկայեր, այլ կազմակերպական ատանափափուկ հարցն ալ կը բեռնաւորէ անոր վրայ:

Տիրող փոխանցման ընդհանուրի համահասարակ շրջանին վրայ երբ կուենանք նաև կազմակերպուելու կենսական անհրաժեշտութիւնը, բնականաբար ալ աւելի կ'գծուարտանայ մեր վիճակը, և իրաց բնական բերումով ալ աւելի զգայի կ'գուռնայ իրարու միտք ու խօսք չհասկնալու էակամ պարտաւոր:

Այս պայմաններուն մէջ լուսազոյն իրատեսան կրնայ ըլլալ ինչպէս անհատներու, նմանապէս և հաւաքակազմութիւններու կամ ժողովուրդներու համար լրջութեան կարիքը, պաշարելութեան ամենատարրական պայմանը:

Այն ժողովուրդները, որոնք կրցած են ամենէ հրատապ վայրկեաններու մէջ իրենց լրջութեան վիճակը ու պաշարելութիւնը չկորսնցնել, միշտ սակաւ վիճակով գուրս ելած են քառասուն ամեն վիճակներէ և աւելի օրագ կերպով կրցած են գտնել իրենց կենսականութիւնը և անվտանգ ու քիչ վիճակով անցընել փոխանցման փափուկ շրջանը:

Ահա այս միեւնոյն փափուկ վիճակին մէջ գտնուելով, հայութիւնը որ դեռ իր գոյութեան կարգը ստիպուած է շարունակել, որքան սեղմէ իր շարքերը, որքան աւելի իրարու մօտենայ և ամբողջութիւնը մը կազմէ, անոնց դասակարգային, գաղափարային ու սկզբունքային խորութեան, այնքան աւելի շահաւոր կ'հանդիսանայ, այնքան աւելի քիչ կ'տուժէ և յաղթական կրնայ հասնել խաղաղ նաւահանգիստ:

Այս գաղափարն ու ուղղութիւնն է որ պաշտպանած ենք ու կ'պաշտպանենք միշտ, որովհետեւ մեր փրկութեան միակ ապահովը անոր մէջ կ'տեսնենք, և ինչպէս ըսինք վերև, պատմութեան մեղի աւանդած գասերը, կրնան մեծագոյն փորձառական գասերը ըլլալ մեղի նման ատապապած ու մարտիրոսացած ազգի մը համար:

Հ. Մ.

ԶԱՅԵԼՈՒՄՆ ՄԱՅՔ

Կիրակի օր ո՞վ չտեսաւ հելլէն զըրահաւորին մօտիկ, սիրուն ու փոքրիկ գրասնու մը, որու յիտնակով կայմին վրայ կ'ձածանէր հարաւ հելլադայի աւելնքնող գրօսկը:

Ուսկից եկած էր, ոչ ոք գիտէր, ո՞ր կ'երթար, ա՛նձանօթիմար, ո՞վ եկած էր՝ լուծիւն, ո՞վ այցելած էր, գործով մունջ անգիտութիւն մը:

Մեծ ազգերու վայել խորհրդաւոր ու պարզաբն վերաբերումով մը, քաղաքի վրայ երթնելով և անոր մէկ ծայրէն միւսը գտնուող գրասնու վայրէրու մէջ գտնուող ժողովուրդին ազատասնով լի ակնարկը կուզուէր այդ սիրուն գրասնուին որ թերևս կարեւոր անձնաւորութիւն մը կ'երթէր իզմիրի յոնիական ամբարն վրայ, և որու սակայն ինքնութիւնը խորհրդաւոր ու ժպտազին ակնարկներու մէջ քողարկել յանձնարարուած էր:

Կարգապահ բոլոր մեծ ու քաղաքակիրթ ժողովուրդներու նման իզմիրի սեր հելլէն բարեկամները, լրջօրէն կ'հետեւէին գրասնուին կողերուն դէմ փչուած ակնարկներու սպիտակ վրձնակներուն և հարաւորութեան և մեծամեծութեան զգացումով մը տուրքուած, անտարբեր գրասնուին մը, բարձրազարդ կ'անցնէին ու կը գտնային, վստահ ներկային ու նոյնքան ապահով սպառողին մասին:

Ըմբռնած էին, որ կարգապահութիւնը մայրի և յաջողութիւններու, պաշարելութիւնը յաղթանակներու և վերէն տրուած կարգախօսի մը համեմատ կշռած ու շափած էին իրենց ընթացքը, անոնց աւելորդ ցուցած լուծիւններու անոնց աւելորդ աղմուկներու և անոնց չափազանցեալ արտայայտութիւններու, համոզուած ըլլալով որ անոնք գործնական հոգի վրայ բացարձակապէս գուրկ են արժէք մը ներկայացնելէ:

Բնականաբար դարեւոր հասնութիւնը ևս մեծ բովի մը ունի մեծահեղափոխութեան և արժանաւոր այս կեցուածքին մէջ:

ԵՍ

ԼՈՐԵՐ ԿԻԼԿ. ՑԱԻ ԱԺԽԱՐՀԵՆ

(Մեր սեփական քղաքակցիկ)

Մերթի 25 Օգոստ. 1920

Չլիթներուն պատահական այցելութիւնէն չի կրցանք տակաւին զըրկուել, հակառակ անոր որ թուրք պատասխանատու կառավարութիւնը ըստարդրեց հաշտութիւնը. մեր ջուրը չեկու տակաւին և մեծ նեղութիւն կայ քողքի մէջ ջրի նուազութիւնէն: 14-15-16 օգ. փ զիշերները անընդհատ թնդանօթաձգութիւնք և հրացանածրգութիւնք շարունակեցին մինչև առաւօտ, եղած ազգաբարութիւնը արդիւնք մը չի տուաւ թուրքերը քաղաք բերելու համար, ատոնք կը մընան Չլիթներուն կազմ ու հպած...:

15 Օգ. փն Ամերիկեան պատերազմական նաւ մը խարսխեց մեր ջուրերը: Տր. Տաւր Պոլս սանելու համար, սակայն յիշատիւն բացակայութեան վրայ երկու ժամ վերջ մեկնեցաւ:

15 Օգ. փն Ատանայէն 250 ձիււոր և 1000 հետիւտն կամուրջ Հայեր Ար-

մաղանեանի առաջնորդութեամբ ճամբայ ելած են գէպի Սիս, որից օգնութեան պիտի երթան Հաճնոյ Հայութեան, Հաճնոյցի պաշարման փոքր խորտակելով յաջողած են բաւական պաշար ներածել յուսով ենք որ մինչև իրենց հայրենակիցներու օգնութիւնը պիտի կրնան դիմանալ:

16 Օգ. փն քաղաքս ժամանեց Միջերկրականի ծովակալ «Տը Պոն» և ընդունուեցաւ մեծամեծ պատիւներով, ամբողջ քաղաքը դրօշազարդուած էր, Հայ արիւնք պատիւներ ընծայեցին ծովակալին որ հետաքրքրուեցաւ հասկնալ, ատոնց մասին հարցումներ ուղղելով, ծովակալը պիտի մնայ երեք օր Մէրսին:

17 Օգ. փն Ծովակալը պաշտօնական ընդունուելով մը ըրաւ կառավարական շէնքի մէջ բոլոր (կողաց ներկայացուցչներուն, ուր խոսեցաւ Մ. Քէմալի նման անխելքներուն դէմ միաձայնացող բովելիք խիստ ընթացքին մասին:

Այսօր իսկ Տարսուսի և Մէրսինի միջև երկաթուղայ գծին վրայ զըստուող չլիթական բոլոր կազմաբաժնի ծովէն ծանր հրետանիով ուղարկուեցաւ, ցամաքէն գրահապատ թրջնը կը հետեւէր գործողութեան մէկ սպայ և եօթը ֆրանս. պիւստի սպաննը սքած գաղտնեցան հնէ չլիթներու չկողմէն. թշնամոյն կորուստը տակաւին յայտնի չէ:

Իսկ նախորդ նի ճամբով անձանօթ պատահաւա Ատանայէն մեկնեցան երկու ծանօթ ղէմքեր, Չաղալեան և Ա. զատեան, որոնցմէ տաղիւնը Ամերիկա և վերջինը եղիպատս կը մեկնին, այս միջոցիս երբ մեք մարդու պակասէն կը գտնուանք, այն երկու կարեւոր ուժերու մեծէ հեռացուցուր ցուօք կարճանագրեմք հոս:

Երբ մեկնողներու համար մեր ցաւը կը յայտնենք, ժամանողները կողմնակից օրտագրուումով 19օգ. փն իզմիրի գծով հոս հասան 22 պատուական երիտասարդներ և իբր կամուրդներ արձանագրուեցան Մէրսինի կամուրդական զուեղերուն մէջ, ենթակուելով տեղացեաց ընդունած բոլոր պայման ու կանոններուն:

Տիր Սասունին, օգնական ամբողջական Հայաստանի ներկայացուցիչ Տիր Մ. Տամատեանի, կարեւոր գործով մը մեկնեցաւ Պէրսիթ, ուր կը գտնուի միւս օգնական Պրն. Թահմազեան, ատոնց վերադարձը կապասուի ի մօտոյ:

19 Օգոստոսին «Բլուլէն» տրէտնօթի մէջ ընդունուելով մը կատարուեցաւ ուր հրաւիրուած էին բոլոր ազգաց ներկայացուցիչները:

20 Օգոս. փն ձերուկ չլիթ մը ճերմակ գրօք պարգած ֆրանս. հրամանատարութեան պաշտօնական նամակ մը բերաւ չլիթապետէն, կ'ենթագրուի թէ՛ բանտարկեալ 17 երեւելի թուրքերու արձակման համար դիմում մ'է այդ:

Երկաթուղին չի բանիր դեռ, և կ'երեւի թէ բաւական ժամանակ հարկ պիտի ըլլայ զայն վերաշինելու, այս ամիսը վստահականութիւնը կազմուելու լիճակի մէջ է և ժողովուրդը խորապէս վիճաւոր, արուած ըլլալով որ Ատանայի, Տարսուսի, Մէրսինի ժողովուրդը լճացած վիճակի մէջ կ'մնան քաղաքներէն ատոնց երկու վայրկեան հեռու գուրս կարենալ ելնելու:

Այժմէն քրիստոնէայ ընդհանուր տարրու սխառն է լրջօրէն մտահոգութիւն Ատանայի 1921 շրջանի վտանգաւոր հարցով: չէթէներու արտոյն սարսափի բերումով թիւ մը հող կարելի չէ եղած մշակել, լծկան անասունները չէթէներէն քշուած տարուած են, հողագործ բազումներ վախեր միացներ են չէթէ նման: ամէն կողմ ամայի և ո՛չ ո՛ք չի մտահոգութիւն այս պիտի կենսական հարցով մը, սպառակներ իբր չէթէներու թաքստացներ այրուած ու քանդուած, ամենապղծ տիկ ջանք մը իսկ չէ կատարուած գալ տարուած ցանքին համար, նոր բերքը շատ մը տեղեր կը մնայ ոչ կանգնուած վիճակի մէջ, դատարու գոյր մէկապիւս, երկնքի թռչնոց միայն ծառայելու, անս բամբակի բերքը հասած է ո՛վ պիտի հաւաքէ և հոգայ զայն, միլիոնաւոր հարստութիւններ յօջա կը ցնդին և կոչնչանան: Ո՛ր են երկրին վարչիները, խրատատու յաճմանները, վայ ձեռք և զձեռք առաջնորդողներուն որ երկիրը կատարեալ գահավիժումի ենթարկեցիք և ամայացուցիք այսպէս:

Մէրսինի չուրը կը կարեն իսլամ պարտագումներն են որ էրենց պարտէքներն ու բանջարանները վրայ կուտան, թուրք հողատէրերը ֆրանս կուտարութեան դէմ կ'ըմբոստացնեն և կը հարկադրեն զանոնք ամէն ինչ թողուլ ու հեռանալ իրենց ագարակներէն ու գիւղերէն, լեռնականներու արջառ ու տաւարը կը յափշտակեն և ծանր տուրքեր կը գանձեն աստուծէ, ո՛ր կ'երթաք անմիտ առաջնորդներ, բաւական չեն ձեր վրայ տուած ծովածուսը հողեր ու հարստութիւններ, բաւական չէ՞ որ մեծխոտիկութիւններով օրօրեցիք տգէտ խաւր և ամենուրեք վրայուս անասաք: կերտել սորվեցէք քիչ մ'ալ փոխանակ քանդելու:

Տարսնի վիճակը բաւական բարւոքած կ'երեւի ֆրանսական քոլոնիէն հոն ժամանումէն վերջ, Հայ և Յէլլան ու ժեր կը մաքստին չէթէական շարձակութեան դէմ, ամբողջ Տարսնի այգիներուն հոյակապ չէնքերը այրուած են չէթէներու կողմէն, եթէ միթիւտական աւելի լաւ լուրի մը կ'ապաստէք Սէն-Քոլ վարձարանին Ամերիկեան տ'օ, էնի և իւր տիկնոջ ազատագրումն է որմէ վերջ Միսիս նիլսոն երախտագարտ չէթէական այս շտրկին սկսած է նոյնիսկ թուրքէ մը թուրքերէն զասեր առնել... քարզանալու համար այն չքնաղ լիցուին մէջ որուն տիեզերական հանգամանքը կըսկար յետ այսու...:

Կիլիկիցի

Երող բոլոր հարցերը յննել յետոյ, ուրախութեամբ հաստատեց որ վերոյիշեալ քաղաքական կուսակցութեանց միութիւնը բացարձակապէս կարելի է և անհրաժեշտ, ու այս մասին հաստատութեան հարկադրութեանց՝ զորս չըրջարեարկանի մը մէջ ամփոփելով ուղղեց ժողովրդական, Ռամկավար և Վերջնական կուսակցութեանց վարիչ մարտիներուն:

Բացի կարգ մը սրբուներէ և թելադրութիւններէ՝ Խորհրդատուները կ'առաջարկէ որ երեք կուսակցութիւններն իրենց մտակոյ ընդհանուր, ժողովներուն կողմէ ընտրեն լիազօր պատուիրակներ, որոնք պէտք է մասնակցին նոյնիսկ ամառն սկիզբը 4. Պոլսոյ մէջ գումարուելիք միացման վերջնական Խորհրդատուներին:

Ազգային Անցումը

Փոխառութեան Գանձախոսութիւնը երկու շարժի երեկոյ Պ. Հ. Պարսեանի նախագահութեամբ իր տոնջին նիստը գումարեց Առաջնորդարանի մէջ, անդամներէն ներկայ էին Պ. Պ. Բ. Կիւլէյեկեան, Ն. Կիւլէյեկեան, Յ. Միքայէլեան, Կ. Պարսեան, Վ. Պարսեան, Մ. Մարտիան, Ս. Գալիպեան, Յ. Քրեման, Ս. Գալիպեան:

Ժողովը որոշեց այսուհետ կանոնադրութեամբ շարժուի հինգ անգամ ժողով գումարել, բացի չորեքշաբթի և շաբթ օրերէն: Սովորական օրերուն նիստերը պիտի սկսին երեկոյեան ժամը 6ին, իսկ կիրակի օրերը առաւօտեան ժամը 10ին: Արտաքուստ նոյն պէս Գանձախոսութիւնը անդամներն իւրաքանչիւրն առանձին նամակներ գրելով ժողովի օրերը և իրենց անգամ ընտրուած ըլլալը տեղեկացնել: Փոխառութիւնը շրջաբերութեան պիտի հանուի Հոկտեմբերի առաջին կիրակի օրը և պիտի փակուի ամիս մը վերջը, այս առթիւ Մ. Սիբիրիտիսի նամակի մը միջոցաւ փոխառութեան գործի մասին տեղեկութիւն տրուելով ի հարկին օժանդակութիւն պիտի խնդրուի Սեպտ. 15էն սկսեալ հայ և օտար թերթերու մէջ հրատարակութիւններ և ծանուցումներ պիտի տրուին:

Տիկ. Մ. Գ. Եսայանի և Տիկ. Մարտի Օ. Գոնջուճեանի փափաքին և ներկայացուցած ցուցակին համաձայն նշանակուած տիկիներու հրաւիրագրեր պիտի գրուին, որպէսզի յառաջիկա Ուրբաթ օր ժամը 5ին (Կ. Ե.) Տիկ. Մ. Օ. Գոնջուճեանի տան մէջ «Տիկի Փոստ» ի նշոյն այս առթիւ տեղի ունենալիք հաւաքովին ներկայ գրտնուին:

— Պոլսոյ Ազգ. Ժողովին մէջ Գոնջուճեան Ս. հետեւալ կարեւոր յայտարարութիւնները քննեց և զորս յարմար կ'ըստենք ներկայի մեր ընթերցողներուն: «Համապատասխան գոյութիւն չունենալէն չհեռանալ թէ դադարած է նաև Պատուիրակութիւնը որովհետև որոշում տրուեցաւ Բարիլի մէջ որ, երբ թրական գոնջուճեանը ստորագրուի, գաղար սանէ պատուիրակութիւնը, բայց չընտրուի այն, որովհետև կան պատասխաններ որոնք դժուար է նախատեսել, հետևաբար բաց դուռ մը պ'տք է մնայ և եթէ պատահին կարեւոր պարագաներ, այդ մարմինը պէտք է գործեն իր զիրքը և նոր համազումար մը կազմուի Այս պատահականութիւններու մէջ կարեւոր տեղը կը գրաւէ Կիլիկեան խնդիրը, որուն շուրջ կարծիքները կը տարբերեն:

Ոմանք կը խորհէին թէ պէտք է հանդարտ կենան, ուրիշներ կըսէին թէ պէտք է շարժին: Կային նաև խորհողներ որոնց մէջ կը գտնուէի ես ալ որոնք կը մտածէին թէ Կիլիկեան ժողովուրդը իրաւունք ունի ըսելու թէ ինչ իրաւունքով կը խառնուին ուրիշները իր գործին ու ինք պիտի ընտրէ իր ճակատագիրը Կիլիկեցիք կըսէին կը մեղմանք բայց չենք մեկնիր այս հողէն, այդ մտքով կ'ապուած էին անոնք իրենց երկրին: Ուրեմն

իթէ դուք ուզէք դադարեցնել պատուիրակութիւնը չէք կրնար, քանի որ այժօր այս վերջին խնդիրներուն համար կրնէ անոնց զիմուները, իր կողմը ունենալով իր հաւանութեան արժանացած պատուական անձնաւորութիւն մը:

«Անժամանակ է ուրիշն խորհիլ ասոնց վրայ երբ մեր գործը՝ գործ է տակաւին և Հանրապետութիւնը չըլքողներ կ'իրիկիտ գործերով քանի որ ունի անիկա իրեն յատուկ գործը և այնքան զփութարկն պայմաններու մէջ»:

— Հանձնարով կ'արձանագրեիք որ Մանչեսթըրէ Պ. Մարքո Պարսեան 100 անգլ. անգլ. չէք մը կ'ըլտէ և յատկացնելու համար այդ գումարը անհրաժեշտ անհրաժեշտ վարակուած հայ կանանց զարմանումին: Պ. Հ. Պարսեան յաճման է յոյ գումարը Առաջն. փոխանորդին:

— Տէր և Տիկին Տօքթօր Տաս Հոյ. Որք. ընկերութեան սրբնոցը այցելելով հետեւալ արձանագրած է այցելուներու տեսիլն մէջ:

«Թուրքիոյ մէջ աւելի կանոնաւոր

և մտքուր Որքանոցի մը չեմ հանդիպած: Չափազանց գոհ եմ հայ Ազգին որբուհիներուն այսպիսի ապաստանարան մը գտնելով»:

— Մեզի կ'տեղեկացնեն թէ մօտ օրէն լոյս կ'տեսնէ գրական շարժութիւն մը արտօնատարութեամբ Պ. Գ. Զարարապետանի:

— Հայ ընթերցատուն 50 ամեայ յորիւնիսի առթիւ եղած զիրքերու նուիրատուութեանց Բ. ցուցակը.—

Պ. Յակոբ Հարինց հայ. և ֆրանս. 100) հատոր, (ձեռագր Առաջն. Տեղապահ Տ. Յովհան Տ. վ. ի), Մ. Փորթուքալեան, Մարտի 7 հատոր:

— Հ. Կ. Սաչի Իզմիրի Մասնաձեռը շնորհակալութեամբ ստացած է Գորտէլի Պատ. Թաղական Խորհուրդէն 80 օսմանիան ոսկի թղթապարտական խաւ երկուստեք գոյացած համաձայնութեան մը հիման վրայ, Ս. Աստուածածնայտունի առթիւ ինպատակ Հ. Կ. Սաչին սպառուելիք փոքրիկներուն վաճառման՝ այս տարի, մասնաձեռը կ'ընտանէ յօտարակամ յապաւումին փոխարէն:

Վ Ե Ր Զ Ի Ն Ժ Ա Մ

ԿԻԼԻԿԵԱՆ ՅԱՐԶԱԿՈՒՄԸ

Պաշտօնական զեկոյց մը կը ծանուցանէ թէ ֆրանսացիները կ'իրիկիոյ մէջ յարձակողական սկսած են, Արաբ զօրամասեր փախուստի դիմած են, Ֆրանսացիները Այնթապը գրաւելով մեծ քանակութեամբ դերի և պատերազմական իրիզներ ձեռք անցուցած են:

Մ. ՎԷՆԵԻԶԷԼՈՍ ԻԶՄԻՐ ԿՈՒԳԱՅ

Աթէնքի նախարարաց Խորհուրդը որ երկէ յիստ պիտի գումարէր, իր նիստը յետաձգած է որովհետև վարչապետը Իզմիր պիտի այցելէ, Մ. Վէնիզէլոս Աթէնքի մէջ Խորհրդարանին առջև կ'առաջարկութեան ընելիք յայտարարութեանց առթիւ պիտի խորհրդակցի Մ. Բէրուլիսի հետ:

Մ. ՎԷՆԵԻԶԷԼՈՍ ԻԶՄԻՐԷՆ ՄԵԿՆԱԾ

Մ. Վէնիզէլոս Իզմիրէն Աթէնք վերադարձաւ, վարչապետը առանց Իզմիր շտաբը ելնելու երկարօրէն տեսակցած է Մ. Սթէրիատիսի և Զօր. Բարասքէ վօրուօսի հետ, Մ. Սթէրիատիս Մ. Վէնիզէլոսի հետ միասին Աթէնք ուղեւորած է:

Մ. ԱՐՕՍԹՕԼԱՔԻԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Մ. Վէնիզէլոսի դէմ մահափորձ կատարողներուն հարցաքննութիւնները լրացած ըլլալով Մ. Արօսթօլուքի տեղեկագիրը այս առաւօտ զին. կ'առաջարկէին պիտի յանձնէ որ անմիջապէս վարչապետին պիտի հասցնէ զայն:

Անպաշտօն տեղեկութեանց համաձայն, տեղեկագիրը կ'առաջարկէ ձեռքազուտածները ազատ արձակել, բացի Մ. Մալրօմիսիսիէ, իր զբաղի Մ. Իքոնամիսիսի, Ֆուրիտէս և Յիվաս սպաններէն, և ուրիշ կարգ մը անձնաւորութիւններէ որոնք Մ. Մալրօմիսիսիսի ծառայութեան մէջ գտնուած էին: Գաղով Մ. Մ. Սթէրիատիս և Վօլքիթիս, անոնք թէև զատարան պիտի զրկուին, բայց մինչև այդ ժամանակ առժամապէս ազատ պիտի արձակուին:

Հարցաքննութիւնները վերջացած ըլլալով մինչև հիմայ գաղտնի պահուած անձնաւորութիւններուն արտօնուած է իրենց ընտանիքներուն հետ տեսակցել:

ԴԱՒԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Կէս զիշերին Մ. Արօսթօլուքի գաւազրութեան տեղեկագիրը յանձնեց մասուլիս, այս տեղեկագիրը ճարտարներուն պատրաստութիւններուն պատմականը կ'ընէ: Իսլաղութեան գոյութիւնը հաստատուած է, Մ. Մ. Սթէրիատիսի, Էքօսթօմօքիսի, Լէօցաքօսի, Մալրօմիսիսի, Գուրիսի և Էսլիսի խոստովանութիւններէն:

ԲՕԼՕՆԻԱ ԵՒ ՍՈՎԻԵՏՆԵՐԸ

Բօլոնիացիները այս անգամ ջախջախիչ յաղթութիւն մը ձեռք բերած են Պուտինիսի աւերելով, որ՝ Թրօքսիսի ամենավերջին յոյսն էր: Բօլոնիոյ ելեւտոնախարարին եղբայրը Մ. Սթէրիատիս կ'առաջարկէ «Էքսէլիտիս» յայտարարած է թէ Բօլոնիացի ժողովուրդը և կ'առաջարկութիւնը կը փափաքէ հաշտութիւն կըսել: հաւանական է որ, աւելցուցած է ան, պոլշէ-լիքները նոր յարձակողականի մը ձեռնարկեն, սակայն այն ալ պիտի ջախջախուի և այն տեսն միայն Սովիետ զեկավարները պիտի փափաքին հաշտութիւն կ'ըսել:

ԼԻԲԱՆՈՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Սուրիոյ ֆրանսական զօրաց ընդհ. հրամանատարը Զօր. Կուրօ անցեալ չորեքշաբթի օր Լիբանանի ինքնավարութիւնը հռչակեց որ այսուհետև ֆրանս. հովանաւորութեան տակ անկախ պետութիւն մը պիտի ըլլայ: Ինչպէս յայտնի է թուրք տիրապետութեան տեսն իսկ Լիբանան արդէն կարգ մը առանձնաշնորհներ ունէր և ֆրանսական հովանաւորութեան տակ էր Լիբանանի բնակչութեան մեծ մասը կաթոլիկ քրիստոնեաներ են:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԱՒԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բօլոնիական կ'առաջարկութիւնը պոլշէիք գաւազրներու հետք մը գտած է որոնց նպատակն էր բանուրական յիզափոխութիւն մը յատուկ բերելով կառաւարութիւնը տապալել: Իսլաղիները խոստացած են վարչապետ Բօլոնիոյ տալ: Շատ մը սլօլշէիք գործակալներ ձեռքազուտուած են:

ՆՊԻԱԳԱՀԱԿԱՆ ՊԱՅԻԱՐՆԵՐԸ

Մ. Նահանգներու մէջ նախագահական ընտրութիւնն արդէն պայքարները սկսած ըլլալով, երկու կուսակցութիւններու ղեկավարները կը մարտնչին:

Ռամկավարականներու ներկայացուցիչը Մ. Քոքս, Մարիոնի մէջ ճառ մը խօսելով, բռնու կերպով ամբաստանած է Հանրապետական կուսակցութիւնը «նախագահութիւնը գնելու համար» գաւազաններուն մը կազմակերպած ըլլալուն համար. Մ. Քոքս Հինգլարթի զիշեր Բիթսպուրի մէջ խօսելով վերստին կրկնած է իր ամբաստանութիւնները:

Այդ սաթիւ ցուցակ մը կարգացած է որուն մէջ մանրամասնօրէն տեղեկագրուած էին այն գրաստական արձանագրութիւնները զորանրապետականները կատարած էին Մ. Նահանգներու զանազան քաղաքներուն մէջ և որոնց զուգարը կը հասնէր 8,145,000 տոլարի. որ եթէ աւելցնենք հանրապետականներու տրամադրութեան տակ գտնուող գումարներուն վրայ, մտաւորապէս 15 միլիոն տոլարի «կաշառքի ֆոնտ» մը կը ներկայացնեն:

Բնականաբար հանրապետականները կը բողոքեն Մ. Քոքսի ամբաստանութեանց դէմ: Հանրապետական կուսակցութեան նախագահը Մ. Հէյս որոշ կերպով յայտարարած է թէ «Քոքս չի յաջողեցաւ իր ամբաստանութիւնները հաստատել, որովհետեւ անոնք սուտ էին»:

Հանրապետականները մեծ գործունէութեան մէջ են. Մ. Հէյսին կարեւոր քաղաքական շանձաւորութեանց հետ իր տեսակցութիւնները կը բաղմուտանային. և սոյն պատճառով արտաքին քաղաքականութեան վրայ ճառ մը խօսելէ առաջ ան խորհրդակցած է Մ. Մէյրընի հետ որ նոր վերադարձու եւրոպայէն:

Բարեկից խմբակները, իր պտոյտէն բերած սպասարութիւնները յայտնած և յայտարարած է թէ ներկայիս Եւրոպա կը շարժարուի նախագահ Ուիլսոնի յամառութեանէն որ կուզէ իր անգործնական և գաղափարապաշտական համոզումները պարտադրել Մ. Ուիլսոնի նախագահ մնալը պատճառ եղած է որ տարի մը բոլորովին պարսպ ժամանակ անցնենք:

Եթէ Մ. Ուիլսոն լիազոր պատուիրակներ զրկած ըլլար Եւրոպա, որոնց եւ թէ լայն իրաւասութիւններ տրուած ըլլային կարելի պիտի ըլլար 1919ի Յունարին իսկ հաստատ հաշտութիւն մը կնքել:

Մ. Հէյսի վրէժները, իր դիտողութիւններուն վրայ աւելցուցած է նաև Մ. Ռուսի կարծիքը, որուն հետ տեսակցած էր Բարիլի մէջ: Մ. Ռուսի մտտածնէն Ամերիկա վերադառնալով կարեւոր յայտարարութիւններ պիտի ընէ:

«Նիւ Եօրք Հէյս լա» թղթակիցը կուզէր որ Մ. Ռուսի հիմակուրնէ Ամերիկան նոր քաղաքականութեան մը հետեւողը կը հանդիսանայ և որ հանրապետական կուսակցութեան պետ ըլլալուն պէս, Եւրոպայի դէմ պիտի արտասայտուի:

ԳՐԷՍԼԱԻ ԳԵՊԵՐԸ

Պերլինէ եկած հեռագրի մը համաձայն, գերման արտաքին գործոց նախարարը Յոն Սիմոն Ֆրանսական զեպանին տեղեկացուցած է որ վերջին անգամ Պրէսլաւի մէջ տեղի ունեցող անկարգութեանց պահուն Ֆրանսացիներու կրած վնասները ամբողջութեամբ պիտի հատուցուին գերման կառավարութեան կողմէն:

ՍՈՎԻԵՏՆԵՐՈՒ ՆՊԱՏԱԿԸ

«Թայմզ» վարչավիճակէն կը տեղեկանայ որ պոլշէ վիճակները տրամադրի են բոլոնիացիներուն առաջարկած բոլոն պայմանները ընդունելու, որպէսզի դադարեցնեն ռուս հոգիները մեջ բոլոնիացիներուն յառաջխաղացումները: Հետեւաբար յուսալի է որ քանի մը օրէն բանակցութիւնները վերսկսին և հաշտութիւնը ստորագրուի: Բոլոնիական կառավարութիւնը քննա մտադրութիւն չունի իր գործերը ազատ արձակելու մինչև որ հաշտութեան զաշնագիր չստորագրուի:

Բոլոնիական կառավարութիւնը գինացողորին հետ միևնոյն ժամանակ հաշտութեան զաշնագիրը չպիտի ստորագրէ: Անոնք առայժմ միայն զինուորադար մը պիտի կնքեն և պիտի սպասեն մինչև որ հաստատ համոզում գոյացընեն թէ՛ Ռուսերը անկեղծօրէն կուզեն հաշտուիլ և իրենց յանձնարարութիւնները կատարել:

Բոլոնիացիները կը մերժեն կարգ մը նոր պետութիւններու կազմութիւնը որոնք Ռուսիան Բոլոնիայէն պիտի բաժնեն, որովհետև ընդհակառակը անոնք պատճառ պիտի ըլլային որ Ռուսիա և Բոլոնիա հասարակաց սահմանազուգումը ունենան:

Վիլսոն խնդրելու աւելի վերջը պիտի կարգադրուի: Հակառակ իրենց առաջին փորձին անյաջողութեան մասնաւորապէս, պոլշէ վիճակները տակաւին հակայարձակում մը գործելու ձրագրով կը զբաղին: Արեւելեան Բրուսիայ սահմաններու վրայ մեծ ոյժեր համախմբուած են:

Պոլշէ վիճակները կը յուսան կրօնօրի շրջանէն վերջնական հարուած մը տալ բոլոնիացիներուն:

Մոսկուէ եկած անթիւ հեռագրի մը կը խոստովանի որ Սովիետները լեզնամի թուային գերակշիռ ոյժերու առջև ստիպուած են կէմպերի ուղղութեամբ նահանջելու:

ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՒ ՊՈԼՇԵՎԻԲՆԵՐԸ

Յրանապետ քաղաքական շրջանակներու մէջ կը կարծուի թէ Ռուս-Բոլոնիական հաշտութիւնը, զաշնակից վարչապետներու միջև էքս ԼԵ Պէնի մէջ տեղի ունենալիք տեսակցութեան վերջը պիտի կնքուի:

Դաշնակիցները Մ. Հէյսին վերջին ծանուցագրին չպիտի պատասխանեն մինչև որ Լիւսէւնի մէջ Մ. Միլոսնի կողմէ արուած որոշումները չընդունուին Սովիետներու կողմէն:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՅԱՌԱՋԻՍԱՂԱՑՈՒՄ

Պարսկական պատերազմական նախարարութիւնը պաշտօնական զեկոյցով մը կը տեղեկացնէ որ օգնանուով զննութեան վաչոց Պարսիկ ուժեր որեւիցէ թշնամի չեն պատահած Հիւս. Պարսկաստանի մէջ:

Պարսկական քաղաքները Իսպիլիի շրջանին մէջ 30 քիլոմետրի վրայ յառաջխաղացում մը կատարած են որ կատարեալ յաջողութեամբ պահուած է:

ԲՕԼՕՆԻԱ ԵՒ ԼԻԹՈՒՆԻԱ

Լոնտոնէն ստոյգ աղբիւրէ կը տեղեկացնեն որ Բոլոնիացիներ յարձակած են Լիթուանական զինուորներու վրայ և անոնց մեծ կորուստներ պատճառած են:

Բոլոնիացիները Սուվալի Լիթուանական քաղաքը գրաւելէ վերջ կը շտապեցնեն իրենց յառաջխաղացումը:

ԶՕՐ. ՎՐԱՆԿԷԼԻ ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐԸ

Լոնտոնէն կը տեղեկացնեն թէ չափազանցուած է այն լուրը որուն համաձայն իր թէ Ռուսերը Քուպանի մէջ մեծ յաղթանակ մը տարած ըլլան Զօր. Վիլսոնի զինուորներուն վրայ, մինչդեռ պզտիկ ընդհարում մը միայն պատահած է յառաջապահներու միջև:

Ընդհակառակը Զօր. Վրանկէլ յաղթականօրէն յառաջանալով գրաւած է ամբողջ Մրիմի թերակղզին:

Օտէսա քաղաքը պաշարուած է Զօրավարին զինուորներուն կողմէն:

ՌՈՒՍԻՈՅ ՆԵՐՔԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Բօլոնիական ճակարկ վրայ կարմիր բանակին կրած պարտութիւնները խոր տպագրութիւն ձգած են Ռուս ժողովուրդին վրայ: ամեն օր յեղափոխութեան փորձեր տեղի կուենան. Բեթրոկրատի մէջ գաւազաններուն մը երկուսն հանուած է որուն նպատակն էր Յիւսիլէֆը սպանիլ և պոլշէ վիճակի կառավարութիւնը տապալել:

Յիւսիլէֆը քաղաքներէն Վոլոչուրման վիճակ հրատարակած է պատրուակելով որ զաշնակից մարտանաւերը պիտի յարձակին Բեթրոկրատի վրայ:

Մոսկուէի մէջ ալ կարգութիւնը շատ աննպաստ է Սովիետներուն, Լէնին և Դրօքի կզգուշանան ժողովուրդին երեւելու, միս կողմէ կը հաստատուի որ պէլշէ վիճակ երկու պետերուն միջև անհամաձայնութիւն մը ծագած է որովհետև Լէնին բոլոնիական ճակարկի պարտութեան ամբողջ պատասխանատուութիւնը Թրօքի վրայ կը նետէ. Լէնին ուզած էր զինազար կնքել Բօլոնիացիներուն հետ, մինչդեռ Թրօքի իր ժողովրդականութիւն վայելիլէն քաշալերու ընդգրկմանը իր ընկերոջ խորհուրդին հետեւելու:

Չիչէրին սակայն վերջապէս համակերպած է Լէնինի և յայտարարած է որ զինազար կնքելու համար Ռուսիա պատրաստ է մեծ զիջողութիւններ ընելու:

ՌՈՒՍԻՈՅ ՄԷՋ ՄԵԾ ՀՐԳԵՀ

Սթոքհոլմէ կը տեղեկացնեն թէ ռուսական շատ մը քաղաքներու մէջ մեծ հրդեհներ ծագած են, վրօքի քաղաքը ամբողջութեամբ այրած է. 150է աւելի մարդիկ այրած են նոսնակէս: Մոսկուայի շրջանակներուն մէջ ընդարձակ տատուներ հոյ ճարակ եղած են: Սովիետները տրակոնական միջոցներ ձեռք առած են: Անոնք կը կոտորածին թէ այդ հրդեհները հակա-յեղափոխականներուն գործերն են, սրնք օրէ օր իրենց զոյս թիւերը զգալի գործնել սկսած են:

Մ. ՔԷՄՍԼԻ ՄԱՀԱՓՈՐԸ

Կարգ մը թիրթիր Մ. Քէմսլի գէմ մահափորձ կատարուած ըլլալը տեղեկացուցած էին, այդ լուրը չէ հաստատուած: Միայն թէ Մ. Քէմսլ «Մարիա» է տառապելուն համար իր գործողութեանց կեդրոնը Էնկելբերգէն Սվազ պիտի փոխադրէ:

Մ. ԼՕՅՏ 2Ի ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՑԻ

«Թայմզ» կը տեղեկանայ որ անգլ. վարչապետը Մ. Լօյտ ձօրձ այս շտապութեամբ պիտի վերադառնայ:

Ստոյգ աղբիւրէ կը հաւատարուի թէ Մ. Լօյտ ձօրձ չի մասնակցի Միլան ձիւղիթի տեսակցութեան:

ՔԷՄՍԼԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Կ. Պօլսէ լուր կը տրուի թէ Անգլոսի կառավարութիւնը ծանուցումներ հրատարակած է:

Այդ յայտարարութիւններէն առաջինով Անատոլուի ժողովուրդին կը բացատրուի թէ ինչո՞ւ համար ազգայնական բանակը ստիպուեցաւ նահանջել հիւլէն յարձակումներու առին:

Երկրորդով կոչ կ'ընէ բանակին որպէսզի ան մինչև վերջը կռուի հիւլէն բանակին դէմ:

ՊԱՏԵՂ ԱՌԻԹ ՄԸ

ԱՅՍՕՐ ՇԱՍԱՆ
1 0. 0 0 0

Չանապան առսահայ, թրքահայ և ստար հեղինակներու նշանաւոր գրքերը:

Նաեւ՝ «Միջնորդ տէր պապա»-ի, «Շէրլոք Հօլմ»-ի և պրակ տա պրակ հրատարակուող բոլոր գրքերու և «Ոստան» ու «Դարման» պարբերագիրներու վերջին թիւերը:

Այն հաստատի զեղջիտ գիրքը ԳՊՐԻՑԱԿԱՆ ԳՐՔԵՐՈՒ ԶՈՒՄ ՄԹԵՐՔ ԴԻՄԻՆ՝

ՆՈՐ ԳՐԱՏՈՒՆ

Ազգ. Առաջնորդարանին թիւ 5
Մանօթ. — Հասցէն պէտք չէ չփոխել «Չարթօ»-ի հետ:

15 ՕՐՈՒՆ ՄԷՋ
ՅՈՒՆԱՐԷՆ ԼԵՂՈՒՆ ՊԻՏԻ ԽՕՍԻՔ
ԼՈՅՍ ՏԵՍԼԻ այնքան անհամար

բութեամբ սպասուած գիրքը՝
ՅՈՒՆԱՐԷՆ ԼԵՂՈՒՆ 15 ՕՐՈՒՆ
ՄԷՋ ԽՕՍԻՔ ՊԵՐՉ ԵՒ ԳԻՏԵՆ
ԵՂԱՆԱՆ

Հայաստանի թրքախոս ամեն հայտ անհրաժեշտ
ԽՆԱՄՈՒՄ ԳԻՒՐՈՒՄՈՅՑ ԱՓԱՆԱԳԻՆ

ԳԻՆ 30 ՂՐՈՒՇ
Հրատարակուիլու
ՉԱՐԹՕՆՔ ՇԱՅԿ ԳՐԱՏԱՆ

ՉԱՐԹՕՆՔ ՇԱՅԿ ԳՐԱՏԱՆ

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ

Ա. Կ. Ո — Պ. Մարգիս Արզարեան
3 ո. Յակոբ Փափազեան 2 սոկի.

Պ. Յարութիւն Զմիւռնակէսեանի մահուան անթիւ (Գ. Խ.):
ՀՈԳ. ՈՐԲ. Ընդ. — Տիկին Հեղինէ

Յասեան 15 քաջ զեպձ, 10 ձմերուկ իւր հանգուցեայ մօր անուան տարեգարծին անթիւ: Տիկ. Ռէնգին 5 ոս. որպէսզի որբուկներ անդամակցին Օրիորդաց Քրիստ. Միւսթեան:

ՄԱՆՈՒՑՈՒՄ

Գասապայի համար կը փնտռուի վարիչ մանկապարտիզարուհի մը, որ ի վիճակի ըլլայ աւանդիկ նաև նախակրթարանի գասերը: 50 ոսկի թուրակ. կարողագոյնին զօնացուցիչ վրձարու: Երկուսն աշակերտաց թիւն է 25-30: Պայմանաւորուելու համար գիւմիլ Գասապայի թագականութեան:

ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԳ (ԿԸԷ)

ՎԱՐԺԱՐԱՆ ՄԻԹԱՐԵԱՆ ՇԱՅՈՑ
ԳԻՇԵՐՕՒՄԻ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ
Հիմնադր. 1846

Վարժարան կը բացուի Սեպտ. 10ին և գասախօսութիւնները կը բարձրանան Սեպտ. 13ին Բշ, օրը:

Գասաւանդութիւնները տեղի կ'ունենան Գաղղիբէն լեղուաւ, մասնաւոր խմբով պիտի տարուի այս տարի Անգլիկներէն:

Արձանագրութեանց համար գիւմիլ ամէն օր 8-10ին 3-5:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՊՅՈՅԱՃԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

ՅԵՐԵԿԵԱՅ ԵՒ ԳԻՇԵՐՈՅԻԿ Ազգային, շիզոսոցիալական, ստեղծարարական

ԺԱՄԱՆԱԿԱՆ

Վերաբացում և սկիզբ դասախոսությանը՝ ԲՆ Սեպտ. 6:

Նպատակ և Ուղղություն՝ անփոփոխ. Տալ ազգ. դաստիարակություն և լեզուագիտական-առևտր. գործնական պատրաստություն:

Մրապիր և Մեթոդ՝ արդիացում. Ուսուցչական կազմ՝ մեծապես զորացրած. բացի հայերէնէ և ուսմանց զանազան ճիւղերէն՝ ֆրանսերէնի, անգլիերէնի յունարէնի և մարգարի համար ստանդակարգ մասնագէտներու անկախութիւնը ապահովուած:

Պայմաններու և մանրամասնութեանց համար դիմել անմամբ կամ գրով Զուլաւտիյէ (Ապրահամ) փողոց, թիւ 16, Հրացի շարժիչ և կիրակիէ) 9-12 և 3-6:

Յարգելի ծնողներէ կը խնդրուի, վերաբացումէն առաջ, իրենց այցելութեամբ պատուել մեզ, թէ կատարուած փոփոխութիւններն իմանալու և թէ որ առաջ գործցած համաձայնութեամբ, յոգևոր իրենց զաւակաց, դաստիարակութեանց կամ տնտես վերջականը դիւրացնելու համար:

Հիմնադիր անօրէն Թ. ՊՅՈՅԱՃԵԱՆ

Իդիս 17 Օգոստոս 1920

ՃՐԱՐՈՒԺԱՎԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԼՈՂԱՆՔՆԵՐ ԱՊՈՒՅԻՆՎԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ Թ. ՓԱՍԽՆՈՒՏԻ

- Պաղ ասուցի
Սկովտիական տուչեր
Մաքրողական լոգանքներ
Ծծումբով
Ազոլով
Քոլոյով
Քիմով
Համեմով

Բորտաութեան դէմ լոգանքներ և իւրեւն Հայնոց մըրնարք փողոց, նոր փուսին զիմաց ԻՉՄԻՐ

Թիւ 19 կանանց համար
« 32 արանց »

Բորտաութեան դէմ միակ զարմանատուն է, ուր զիմոզք անպատճառ կը բժշկուին:

Ներքին Բժիշկներ
ՏՐ. Բ. Ս. ԲՈՒԿՐԱՍԻՍ
ՏՐ. Ս. ԳԱԼՔԱԳՃԵԱՆ

49-100

Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ

Table with 2 columns: Item name and Price. Items include flour, oil, and other goods.

ԹՂԵՐԵՐԺ

Table with 2 columns: Item name and Price. Items include various types of flour and grain.

Կ. Ս. ՊԱՆՊԱՆԵԱՆ

Ա.Լ.Ի.Բ.Ի ԵՒ ՆՊԱՐԵՂԷՆԱՅ ՄԵՍ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՀԱՅՈՅ ԵՆԵՂԱՅՈՒՑ ԳՆԱՐԱՅ

Ն Ո Ր Ժ Ա Մ Ա Ն Ո Ւ Մ ՊԻՍԵՐԻՆ

Վաճառատունն ստացած է ԲԻՔ ՍՐԻՆ

Նշանաւոր պիսիքներու գործարաններու արտադրութեան հետեւեալ տեսակները. Պուրպուր, Բլոթլա քրիմ, Եսփի քրիմ, Բրաթրա քրիմ, Աքաւէմի քրիմ, Բոքոնըթ արափ, Նըրալրի, Շորթթէյթ, Բրիմ քրէրըր, Կոլալն Բըֆ, Նայա, Թիֆֆին, Բըթիթ էքոսէ Բըթի պէտր, Մարի Եւն.

Գիները չափաւոր Խիտ թարմ ապրանք Ամէն կերպով գոհացուցիչ: Նոյնպէս ստացած ենք, իտալական ապրանք, թիթիղէ տուփերու մէջ մաքուր ձիթախաղով պատրաստուած, թարմ կարմիր պղպեղի սալաթա: ՄԻՄԻԱՅՆ 20 ՂՐՈՒՇԻ

Խիտ համեղ պնակ մը սալաթա

ՄԵՍ ԼՈՒՍԱՆԿԱԲՁԱՏՈՒՆ

Քօսթա Մալրուսի ԲԱՍՍՏ ԱՆԹԱՔԻ-Ձընկոց Բ-դ (Սալաղ Վանթի կից)

ՃՈՂՈՎՈՒՐԴԻ ՁԱՅՆԸ

Օր-Բերէ Կապուլու և հասարակական Տարեկան բաժնեգին 700 գրչ.

ATLANTIC ASSURANCE



COMPANY, 79, CORNHILL

LIMITED. LONDON. E. C. 3.

Գ. Ո. ՈՍԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԵՐԿԱՅԱՑՈՒՄԻՉ ԲՁՄԻՐ, ԲԱՍՍՏ ԲԷՇՏԻՄԱԼՃՈՂՈՒ ՎԵՐԻ ՅԱՐԿ ԹԻՉ

Քաուչուէ Աղեկապեր

Ամորձիքի հիւանդութիւնները կը բժշկուին առանց ցաւի, առանց վտանգի, առանց գործողութեան և դիւրութեամբ: Տառապողները փութան նշանաւոր հարիչ ՏՕԲԹ. ԲԱՐԱԵԱՆՕԲՈՒՂՈՒ որ Աթէնքէ քաղաքս նոր հասած է և հաստատուած Բարալէլ փողոց թիւ 176 նաւամտոցի ետեւը: Կրնայ բժշկել աղեկապութեան ամեն տեսակները քրօնիկ կամ նոր, արկածի տրդիւնքէ և ին. յառաջ եկած: Կը պատրաստէ նաև կիներու յատուկ սրովայնի կապեր: Կընդունի ամեն օր առաւօտ 8-12 և կէսօրէ ետք 3.30-6 քլինիքը Բարալէլ փողոց թիւ 176:

ԱՊՈՒՅՈՒՄԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ

Կրակի դեմ. NATIONAL UNION SOCIETY LTD. LONDON CENTRAL INSURANCE CO. LTD. LONDON Ծովային. PHOENIX ASSURANCE COMPANY LTD. LIVERPOOL Դիմել նախառանձնաքանակ հաւաք. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՄԱՆՆԵՐ Լ.ԵՒ Լ. ՎԱՐՊԵՏԵԱՆ

ՀԱՐՈՒՑ ԸՍԹԵՆՏԵՐ

ՏԵՅՎԻՑ ԼՕՅՏ ՃՕՐՃ ԿԵՍԱԳՐԱՎԱՆ ՌԻՍԻՄԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԻ ՏԱՆԸՇՕԹԵՐՐՈՐԴ ՌԱԶՄԱՆԻԹԻ ԽՆԳԻՐԸ

Պէտք է յիշել սակայն որ զինուորական կարգապահութիւնն ալ իր սահմանները ունի, անոնք որ 1915ի գարնան տեղի ունեցող շարժումներէն մասնակցած են, զիւրութեամբ պիտի յիշեն ուրիշ բազմաթիւ պատմութիւններ որոնք բոլորն ալ հասարակաց խորհրդարանին մէջ պատմութեան և Այս բոլորին մէջ սակայն խելքք և հնարիմացութիւնը չէր որ կը պակասէր, ընդհակառակը գոյութիւն ունեցող կազմակերպութիւնները անկարող էին ներկայիս պահանջումներուն գոհացում տալով ապագան բարոյքելու:

ԼօրտՔիչները կազմակերպութեան հանճար մը համարուած էր, այս խնդրոյն առջև տեղի տուաւ Այդ ժամանակները անոնք որ այս մեծ մարդէն զերմարդկային աշխատանքներ սպասելով, իրենց ակնկալածները չ'իրականացած, շիտասանակարգաբարկել ԼօրտՔիչները, մենք խղճի կատարեալ հանդարտութեամբ կրնանք ըսել որ այդ

մարդիկը բացարձակապէս անիրաւ և զած են: Լօրտ Քիչները կըր Նգիպտոսէն մեկնեցաւ պատերազմական նախարարութիւնը ստանձնելու համար, տեսաւ որ ինք հրամանատարութիւնը ընդունած էր նաևու մը, ուր բնաւ նուազ տի չկար, որովհետև պատերազմ, նախարարութեան պատուական սպայաւոր խումբները բոլորն ալ պատերազմի գտնազան թատերավայրերը մեկնած էին:

Լօրտ Քիչները ինքզինքը բոլորովին միմակ պղաց և ստիպուած եղաւ միևնոյն ատեն թէ՛ սպայաւորային պետի, թէ՛ զինուորագրութեան տնօրէնի, և թէ պարհնաւորման քննիչի պաշտօններ կատարել, սակայն հակառակ իր հանճարիով ինքնուրուիւն ան չկրցաւ դիւրութեամբ և շուտով յաջողիլ: Պատ. նոր նախարարը պատերազմական նախարարութեան մէջ արմատական փոփոխումներ մտցնել կրեզէր,

սակայն այդ գործը շատ դժուարութիւններ կը ներկայացնէր պատերազմի ընթացքին, ուստի որոշեց կարելի եղածին շափ շատ և մեծ աշխատանքները անձամբ ստանձնել: Այս եղանակը սակայն կարճ մը կարեւոր գործերու յապտղիւն պատճառ կ'ըլլար: Այդ յապտղիւններու առթիւ սպանման թիւ խնդրին ատեն մեծ դժուարութիւն ծագեցաւ որովհետև ռազմանիւթի պակասը մեծ աղէտներ կը պատճառար երկրին և տղանց գոյութեան համար մղուող պատերազմին. սակայն շնորհիւ ամբողջ ազգին կողմանէ կատարուած միասնական ջանքերուն և կորովի աշխատանքներուն, կարելի եղաւ այս շարիքն ալ զարմանել Այս ջանքերուն մէջ Մ. Լօյտ ձօրձ շատ մեծ դեր ունեցաւ: Թնդանօթները պահանջելէ վերջ 1914ի աշնան Մ. Լօյտ ձօրձ միասնապայցից, աւելի յօտէն ուսումնասիրելու համար ճարտարաբանական վերակազմութեան այն աշխատանքները, որոնց շնորհիւ միասնա՝ իւր հիւսիսային երկրամասերու չկորուստէն վերջն ալ, կրցաւ զինուոր և ռազմանիւթ հասցնել իր բանակին: Մ. Լօյտ ձօրձ վերադարձաւ իր հետ բերելով մանրամասն մէկ տեղեկագիրը այն սքանչելի ոյթին, որ արդիւնքն էր հայրենասէր և մեծ ֆրանսացի Մ. Ալպէն Թօմասին

Մ. Ասքուլիթ կատարելապէս համաձայն գտնուեցաւ և անմիջապէս խորհուրդ մը կազմուեցաւ որինագիծին մանրամասնութիւնները որոշելու համար, այս խորհուրդը Լօրտ Քիչներին նախագահութեան տակ պատերազմական նախարարութեան մէջ գումարուեցաւ ուր խնդրը հիմնովին վիճարանութեան դրուելէ վերջ՝ ֆրանսական յատակագիծին ընդունուելը գրեթէ որոշուեցաւ: Սակայն շարժումներ կ'անցնէին և սակաւին որեւիցէ իրական աշխատանք մը չկար մէջտեղը: Արդարեւ գործադրութիւնը սխալներով լեցուն էր, ձեռն ալ անցաւ և դարձեալ արդիւնք չկրցաւ: Քիչներին կամաւորներէն հարիւր հազարաւորներ առանց հազուատի, առանց զէնքի և առանց թնդանօթի կ'ապասէին: Զակատներէն ամեն օր զժգոհութեան և բողոքի մրմունջներ կը հասնէին, որոնցմով գրեթէ միշտ գերման գերագանց թընդանօթներուն բրիտանական բանակին տաթած աղէտները կը տեղեկացուէր: Փետրվարի մէջ նոր վտանգ մը ևս ի յայտ եկաւ. Ռուսիա վերջնականապէս սպառած էր իր ռազմամթերքը, Ռուսական հակառակական բանակները անզէններու բազմութեան մը պիտի վերածուէր միևնոյն ատեն արևմուտքի մէջ ևս գործողութիւնները նպատակաւ չէին երթար:

(Շար.)